ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2025 թվականի հունիսի 17-ից գումարված հերթական նիստերի մասին
(17.06.2025թ.- 19.06.2025թ.)

N ը/կ	Հարցի անվանումը	Հեղինակը	Ծանոթություն
1	2	3	4
1.	Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն	**ՀՀ կառավարություն** Կ-1065-29.04.2025-ՖՎ-012/0 **Հիմնական զեկուցմամբ հանդես եկան Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը և ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը:** **Արտահերթ ելույթի իրավունքով հանդես եկան Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ**	Աժ-ն որոշումն ընդունեց կողմ՝ 64, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1 ձայներով

		Մկրտչյանը, Առողջապահության նախարար Անահիտ Ավանոսյանը, **Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը**, **ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը և Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը**: **Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Նիկոլ Փաշինյանը**:	
2.	Սահմանադրական դատարանի դատավորի ընտրություն	ՀՀ կառավարությունը Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում ընտրելու համար առաջարկել է Արտակ Զեյնալյանի թեկնածությունը: 1090-30.05.2025 Թեկնածուին ներկայացրեց ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը:	Արտակ Զեյնալյանը 67 կողմ, 0 դեմ ձայներով ընտրվեց Սահմանադրական դատարանի դատավոր եւ երդվեց Ազգային ժողովի նիստում:

Հունիսի 17-**ից** 19-**ի նիստերի ընթացքում՝**

- Հայտարարությամբ հանդես են եկել 10 պատգամավորներ,
- 14 պատգամավոր բանավոր հարցերով դիմեցին կառավարությանը:

- Ազգային ժողովը 0 կողմ, 89 դեմ և 0 ձեռնպահ ձայներով մերժեց ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանի օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի ՀՕ-23-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (Պ-1050-11.04.2025-ՊԱ-011/0) նստաշրջանի օրակարգ ընդգրկելու մասին հարցը: